

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հերկյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետի (ծածկագիր 2.1-5), ֆինանսական բաժնի առաջատար մասնագետների (ծածկագիր 3.1-7,3.1-8), աշխատակազմի առաջատար մասնագետների (ծածկագիր 3.1-9, 3.1-11), համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին:

1. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ /ծածկագիր 2.1-5/

ա.Անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

բ.Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը, կատարում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները: Կազմում է համայնքի բյուջեի նախագծերը, վարում է հաշվապահական հաշվառում, կազմում է ֆինանսական հաշվետվություններ, լուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրները, ընդունում որոշումներ իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է բաժնի փախհարաբերությունները աշխատակազմի աշխատողների հետ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ

ա. Համայնքային ծառայության պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի, ՀՀ Համայնքային Ծառայության Մասին», «Տեղական ինքնակառավարման Մասին», «Նորմատիվ իրավական Ակտերի Մասին», «Հաշվապահական Հաշվառման Մասին», .Հայաստանի Հանրապետության օրենքի. Հայաստանի Հանրապետության «Բյուջետային Համակարգի Մասին», .Հայաստանի Հանրապետության Օրենքի, «Գնումների Մասին», .Հայաստանի Հանրապետության օրենքի, «Գանձապետական Համակարգի Մասին», .Հայաստանի Հանրապետության Օրենքի, Աշխատակազմի կանոնադրության, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 11: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 8-ը, ժամը 18.00: Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք: Հեռ.՝ 093-008-908 էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

2. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի առաջարար մասնագետ (ծածկագիր 3.1-7),

- ա. Անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
- բ. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:
- գ. Կատարում է գույքահարկի, հողի հարկի հավաքագրման աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ա. Միջնակարգ կրթություն:
- բ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- գ. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 12: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 8-ը, ժամը 18.00: Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք: Հեռ.՝ 093-008-908 էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

3. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի առաջարար մասնագետ (ծածկագիր 3.1-8),

- ա. Անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
- բ. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:
- գ. Կատարում է խմելաջրի հավաքագրման աշխատանքներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ա. Միջնակարգ կրթություն:
- բ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- գ. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 13: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 8-ը, ժամը 18.00:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:
Հեռ.՝ 093-008-908 էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

4. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-9,)

- ա) Կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:
- բ) Հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին:
- գ) Զբաղվում է համայնքի տնտեսական զարգացման հարցերով:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ա) Միջնակարգ կրթություն:
- բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 30-ին, ժամը 11: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 15-ը, ժամը 18.00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:
Հեռ.՝ 093-008-908 էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

5. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-11,)

- ա) Կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:
- բ) Հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին:
- գ) Զբաղվում է համայնքի հաշվետվություններով, միջնորդագրերով, զեկուցագրերով և այլն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ա) Միջնակարգ կրթություն:-
- բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հոկտեմբերի 30-ին, ժամը 12: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 15-ը, ժամը 18.00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով):

բ) Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների) աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:

գ) Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

դ) Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք:

զ) Երկու լուսանկար (3x4 չափսի):

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Նալբանդյանի համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 18.00-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմ (գ. Նալբանդյան, հեռ.՝ 093-008-908) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-76-49/

